ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-21-7/11-1

ք. Երևան 08 .10.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Լաբտեխգրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ. Ալեքսանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

[illegible] պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը [illegible]ատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը [illegible]ող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության [illegible]իականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնությունները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ **8700000** ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ **8823700** ՀՀ դրամ.

ՄԳ/ՆԳ – բանաձևով սահմանված գործակից՝ **0,985.**

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է /**հավելված 1**/.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

---

21 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

[illegible]ունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ [illegible]վելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[illegible]առայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ [illegible]ողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության [illegible]ագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե [illegible]առայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Լաբտեխգրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ներսիսյան 10-3/2
ՀՀ ֆինանսների նախարարության	Ինեկոբանկ ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 20500223092310002
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 00261009
ՀՎՀՀ 02522157	տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Կ. ԵՐՈՒՏՅԱՆ	Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-7/11-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հավելված 1

Հ/հ	ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)
1	**Գազային քրոմատագրաֆիայի լաբորատորիայի սարքավորումների ինժեներական սպասարկում**	**դրամ**		**6 000 000**
	Գազային քրոմոտոգրաֆ-Մասս-Սպեկտրոմետր, արտադրությունը Shimadzu QP 2010 PLUS GCMS			
	Ծառայություն			
1	Որակաորում /Դիագնոստիկա/՝			
1,1	Ծրագրի վերականգնում՝ ծրագրի ներբեռնում համակարգիչ , համակարգիչ-սարք կապի ապահովում	հատ	150 000	
1,2	Սարքի կարգաբերում	հատ	250 000	
1.3	Գործարանային ճշգրիտ ծրագրով սարքում առկա սխալների (Error)հայտնաբերում, ինչպես նաև դրանց վերացման վերաբերյալ հնարավոր լուծումներ	հատ	400 000	
2	Կրիչ գազի սպասարկում՝			
2.1	Լաբորատորիայում առկա գազերի տեղադրում կարգաբերում, հոսքի ստուգում	հատ	15 000	
2.2	Գազերի գեներատոր՝ ազոտ, ջրածին, օդ մատակարարող NHA 300 սարքի հոսքերի չափում	հատ	24 000	
2.3	Սարքին միացված գազերի և օդի արտահոսքի ստուգում և հայտնաբերում	հատ	70 000	
2.4	Սարքին միացված գազերի և օդի արտահոսքի հայտնաբերման դեպքում կատարել արտահոսքի վերացում	հատ	50 000	
2.5	Հելիում գազի բալոնի վերանորոգում	հատ	70 000	
2.6	Գազի ճնշման կարգավորիչի (ռեդուկտոր) փոխարինում	հատ	5 000	
2.7	Գազի ճնշման կարգավորիչի (ռեդուկտոր) խողովակների ռետինե շապիկների տեղադրում և փոխարինում	հատ	5 000	
2.8	Գազերի հոսքային ֆիլտրերի տեղադրում և փոխարինում 1 հատը	հատ	10 000	
2.9	Գազերի գեներատոր՝ ազոտ, ջրածին, օդ մատակարարող NHA 300 սարքի ֆիլտրերի հավաքածուի(օդի ֆիլտր՝ կարբոն - 1 հատ, սիլիկագել - 1 հատ, ազոտի ֆիլտր՝ սիլիկագել - 1 հատ, ջրածնի ֆիլտր՝ սիլիկագել - 1 հատ) տեղադրում, կարգաբերում	հատ	48 000	
3	Մասս սպեկտրաչափ՝			
3.1	Իոնային աղբյուրի (մասս դեդեկտորի)մաքրում	հատ	400 000	
3.2	Մասս սպեկտրաչափի մանեկի տեղադրում	հատ	25 000	
3.3	Մեկուսիչի տեղադրում	հատ	10 000	
3.4	Մասս սպեկտրաչափի տափողակի տեղադրում	հատ	30 000	
3.5	Մասս սպեկտրաչափի վերափոխիչի տեղադրում	հատ	15 000	
4	Քրոմատագրման աշտարակ՝			
4.1	Աշտարակի գրաֆիտային սեղմածգանի տեղադրում (մեկ հատ)	հատ	10 000	
4.2	Աշտարակների միակցիչի տեղադրում	հատ	14 400	
4.3	Գազային քրոմոտոգրաֆի աշտարակի ակտիվացում	հատ	30 000	
4.4	Գազային քրոմոտոգրաֆի աշտարակի տեղադրում և փորձարկում՝	հատ	50 000	
4.5	Աշտարակի արտահոսքի հայտնաբերում և վերացում	հատ	30 000	
5	Ներարկման համակարգ՝			
5.1	Գազային քրոմոտոգրաֆի ներարկիչ ներարկման համակարգի համար տեղադրում կարգաբերում	հատ	50 000	
5.2	Ավտոմատացված ներարկման համակրգի մխոցի բռնիչի փոխարինում, տեղադրում, կարգաբերում	հատ	80 000	
5.3	Ռետինային սեղմիչ ներարկման համակարգի համար /Septa/ փոխարինում (մեկ	հատ	10 000	

	FID հայտածիչ			
6.1	FID հայտածիչի այրիչի/բոցավառիչի վերանորոգում	հատ	150 000	
6.2	FID հայտածիչի այրիչի/բոցավառիչի փոխարինում	հատ	420 000	
7	Վակուումային պոմպ			
7.1	Վակուումային պոմպի յուղի փոխարինում՝	հատ	9 600	
7.2	Վակուումային պոմպի խողովակների փոխարինում	հատ	456 000	
	Ապրանքների փոխարինման ծառայություն			
1	Մաս սպեկտրաչափ			
1.1	Մասս սպեկտրաչափի կարգաբերման ստանդարտներ	հատ	220 000	
1.2	Իոնային աղբյուրի (մասս դեդեկտորի)մաքրման հավաքածու 1	հատ	250 000	
1.3	Իոնային աղբյուրի (մասս դեդեկտորի)մաքրման հավաքածու 2	հատ	550 000	
1.4	Մասս սպեկտրաչափի մանեկ	հատ	30 500	
1.5	Կերամիկական մեկուսիչ իոնային աղբյուր N2	հատ	80 000	
1.6	Ապակե գծային կարգավորիչ /Liner Split less/	հատ	40 000	
1.7	Ապակե գծային կարգավորիչ /Liner Split /	հատ	40 000	
1.8	Մասս սպեկտրաչափի տափողակ	հատ	3 000	
1.9	Մասս սպեկտրաչափի վերափոխիչ	հատ	3 000	
2	Քրոմատոգրաֆիան աշտարակ			
2.1	Աշտարակի կտրիչ	հատ	45 000	
2.2	Աշտարակի գրաֆիտային սեղմածգան (Ferule) N10	հատ	60 000	
2.3	Աշտարակների միակցիչ	հատ	112 000	
2.4	Աշտարակի ծգաններ	հատ	60 000	
2.5	Գազային քրոմոտոգրաֆի աշտարակ ճարպաթթուների համար 100մ	հատ	1 440 000	
2.6	Գազային քրոմոտոգրաֆի աշտարակ թունաքիմիկատների համար 60մ	հատ	576 000	
3	Ներարկման համակարգ			
3.1	Գազային քրոմոտոգրաֆի ներարկիչ ձեռքով ներերկման համար N1	հատ	74 400	
3.2	Գազային քրոմոտոգրաֆի ներարկիչ ներարկման համակարգի համար N1	հատ	72 000	
3.3	Ավտոմատացված ներարկման համակրգի մխոցի բռնիչ	հատ	18 000	
3.4	Ռետինային սեղմիչ ներակման համակարգի համար /Septa/ N50	հատ	168 000	
4	FID հայտածիչ			
4.1	FID հայտածիչի որակորման լուծույթներ	հատ	80 000	
4.2	FID հայտածիչի այրիչի/բոցավառիչի վերանորոգման հավաքածու	հատ	130 000	
5	Կրիչ գազ			
5.1	Ազոտ գազ, լիցքավորված ոչ պակաս 50 լիտր, ճնշումը ոչ պակաս 200 բար /բալոնի ետ վերադարձի պայմանով/	հատ	25 000	
5.2	Ազոտ գազ, լիցքավորված ոչ պակաս 50 լիտր, ճնշումը ոչ պակաս 200 բար /առանց բալոնի ետ վերադարձի պայմանի/	հատ	42 000	
5.3	Հելիում գազ 99.9999% մաքրությամբ, լիցքավորված ոչ պակաս 50 լիտր, ճնշումը ոչ պակաս 200 բար /բալոնի ետ վերադարձի պայմանով/	հատ	500 000	
5.4	Հելիում գազի բալոն, տարողությունը 50 լիտր	հատ	300 000	
5.5	Գազի ճնշման կարգավորիչ Եվրոպական արտադրության նախատեսված գերմաքուր գազերի համար	հատ	200 000	
5.6	Գազի ճնշման կարգավորիչի (ռեդուկտոր) խողովակներ 1 մետր	հատ	800	
5.7	Հելիում գազերի հոսքային ֆիլտր՝ խոնավության	հատ	180 000	
5.8	Հելիում գազերի հոսքային ֆիլտր՝ կարբոններ	հատ	192 000	
5.9	Գազերի գեներատոր՝ ազոտ, ջրածին, օդ մատակարարող NHA 300 սարքի ֆիլտրերի հավաքածու(օդի ֆիլտր՝ կարբոն - 1 հատ, սիլիկագել - 1 հատ, ազոտի ֆիլտր՝ սիլիկագել - 1 հատ, ջրածնի ֆիլտր՝ սիլիկագել - 1 հատ)	հատ	150 000	
5.10	Սարքին միացված գազերի մետաղական խողովակ իր միացումներով	հատ	200 000	

	Վակուումային պոմպ			
	Վակուումային պոմպի յուղի 1լ	հատ	25 000	
5.2	Վակուումային պոմպի խողովակների հավաքածու	հատ	70 000	

Ծանոթություն

1) Ծառայությունը մատուցվելու է քաղաք Երևան, Արշակունյաց 73ա հասցեում, ՀՀ ՀՈՒ ԹՎ անասնաբուժական ծառայության հայտերի հիման վրա՝ հայտերով սահմանված ժամկետներում:
2) Հայտերը ուղարկվում են կատարողի ներկայացրած էլեկտրոնային հասցեին: Մատակարարի կողմից էլ. փոստով հայտը ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում պետք է հավաստվի նրա ստացումը:
3) Հայտերը ներկայացվում են ՀՀ ՀՈՒ ԹՎ անասնաբուժական ծառայության կողմից՝ ըստ անհրաժեշտության:
4) Սույն ծառայությունների համար պլանավորված առավելագույն գինը կազմում է՝ **6 000 000 ՀՀ դրամ:**
5) Ծառայություններն անհրաժեշտ է դիտարկել որպես մեկ չափաբաժին:
6) Ծառայությունները մատուցվում են սպասարկող կազմակերպության ուժերով և միջոցներով:
7) Սպասարկման ծառայության ընթացքում կազմակերպությունը պարտավորվում է ապահովել անվտանգության կանոնները:
8) Փոխարինվող ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
9) Կազմակերպությունը պարտավոր է 6 ամսվա ընթացքում իր կողմից փոխարինված ապրանքների խափանման կամ այլ խնդրի դեպքում (առանց մարդկային գործոնի միջամտության) իրականացնի կրկնակի փոխարինում՝ իր հաշվին:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայությունների անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2021թ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.
1	**էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ** /Գազային քրոմատագրաֆիայի լաբորատորիայի սարքավորումների ինժեներական սպասարկում /	դրամ	1	6000000	Ըստ ՀՀ ՀՈՒ ԹՎ անասնաբուժական ծառայության հանձնարարականների

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-7/11-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ, ընդ որում՝ 4-րդ եռամսյակ
1	**էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ** /Գազային քրոմատագրաֆիայի լաբորատորիայի սարքավորումների ինժեներական սպասարկում/	50111260/1	6000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Լաբտեխգրուպ» ՍՊԸ տնօրեն

Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-21-7/11-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

	Մատուցված ծառայությունների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾԶԲ-21-7/11-1 պայմանագրի

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն